

Բ ԳԼՈՒԽ.

ՔԱՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Վարանդալում կան քարեր և ժայռեր, որ պաշտում
են. ժողովուրդը ուխտի է գնում նրանց, մոմ վառում, աղօ-
թում, և յատաղներ կտրում: Այսպէս՝ Սղնախ գիւղի մօտ-
գտնուում է մի ահազին ժայռ քար, որ մի ժամանակ ժար-
ռից պոկուելով գլորուել, եկել է մինչև գիւղ և հենց գիւղի
մօտ կանգ առել, առանց մի որ և է վնաս պատճառելու:
Գիւղացիները գոհ լինելով, որ ալդ քարը աւելի առաջ չէ
գլորուել և վնասներ պատճառել, պաշտում են նրան: Այս
քարը կոչում է Պուկ-քար, այսինքն պոկ եկած քար: Ամուլ
կանալք գալիս երեք անգամ թել են փաթաթում այս քա-
րի շուրջը և ապա տանում, գուլպալ գործում հազնում, որ-
պէս զի երեխալ ունենան:

Կաթ չտուող կովերին էլ տանում երեք անգամ պտտեց-
նում են նրա շուրջը:

Հանդիպակաց ժայռն էլ, որտեղից պոկ է եկել ալդ
ահազին ժայռ քարը, նոյնպէս պաշտում է: Անտեղ առա-
ւելապէս երաշտ ժամանակ են մոմեր վառում, որ անձրե
գալ և կամ կարկուտ չլիփի:

Մի ալսպիսի ժայռ էլ գտնում է Նիրհեր գիւղում, լե-
րան լանջին, որ եթէ գլորուի, գիւղը տւերակ կը դարձնի:
Վառուած բազմաթիւ մոմերից ժայռի լանջը բոլորովին
սևացել է:

Բայց աւելի հետաքրքիր է Գիւնէլ ճարտար գիւղի Նմա-
նէքը, որ կարծէք դոլմէն լինի: Մի կանգնած ժայռ քարե
վրայ ընկնում են երկու մեծ ժայռ քարեր, միւս կողմէց
լինելով իսկական ժայռի վրա: Սրանց միջև կալ
երկու փոքրիկ խորշ: Կատաղած անասուններին, մանաւանդ
ալն կովերին, որոնք կթելիս հանգիստ չեն մնում և կամ
հորթին թոլլ չեն տալիս ծծելու, բերում կոխում են այս
խորշերի մէջ, նախապէս մոմեր վառելով ժայռի առաջ, որ

խելօքանան։ Այս ժայռի առաջ մի ծառ կալ, թիքեռնը, ծածկուած բազմաժիււ շորերի կտորներով։

Մի մեծ ժայռ քար էլ Սխտորաշէնի մօտ կալ, որ կարծես մանհիր լինի։ Սրա առաջ չորս սրբազան ծառեր էլ կան, ծածկուած շորի կտորներով։ Բացի սովորական ուխտ անելուց և մոմեր վառելուց, ամէն մի անցորդ պարտաւոր է սուրբ քարի մօտից մի փոքրիկ քար վերցնել, գնել ո. քարի վրալ և մի ուրիշը վալր ձգել։

Մի ալսոլիսի քար էլ Քարին-տակը գիւղում կալ։

Սակայն առանձին ուշադրութեան արժանի են՝

Շ Շ Ա Գ Ա Ր Ե Ր Ը

Սրանք ծծի նմանութեամբ պառկներ են, որ գտնւում են ժայռ քարերի լանջերին, երբեմն ահազին ժայռերի և երբեմն ալրերի մէջ։ Սրանցից կաթ կաթ ջուր է հոսում, որ սակաւակաթ կանանց կաթը աւելացնելու դեղ է համարում։ Կաթ չունեցող կինը իւր երեխան գրկած գալիս է ալդ քարի առաջ չոքում, աղօթում, մի քանի մոմ վառում և ծծերը ըռնում ալդ կաթիների տակ և կամ վերցնում ալդ ջրեց, մի մասը խմում, միւսն էլ ծծերին քսում։ Ասում են, որ անմիջապէս կաթը առատանում է։

Ալսոլիսի ծծաքարեր շատ կան, որոնցից նշանաւոր են. Խերեխան գիւղի ներքեւ գտնուածը։ Սա մի ժայռ քար է, որ հեռուից մի երեխալին ծիծ տունդ կնոջ նմանութիւն է տալիս։ Ունի և պառկներ, որոնցից ջուր է կաթկաթում։ Ասում են, որ մի գժբաղդ մայր, ալդ տեղում իւր օրօրոցի մէջ պահած երեխալին ծիծ տալով՝ խնդրել է Քիրս լեռից *), որ իրեն քար դարձնէ, որովհետեւ ալլ ևս չի ուզում տուն վերադառնալ և իւր սկեսուրի ձեռին տանջուել։ Քիրսը կատարել է նրա խնդրիը, միւսնոյն ժամանակ նրան կաթ տալու շնորհքը պարզելով։

*). Յատկապէս շատերին պատմել եմ տուել և բոլորն էլ առանց բացառութեան առել են, թէ խնդրել է Քիրսից։

Մի ալդպիսի ծծաքար կալ և Սարիբեկում, որ գտնուում է մի ժայռի մէջ, մինն էլ Փիւրման գիւղում: Մի ուրիշն էլ Թաղղարի մօտ, Ղուրուշ-չալի արևելեան կողմը գտնուող ալրի մէջ, ինչպէս և մինը Ծովատեղ գիւղի մօտ, լճի ափին, որի անունով և լիճը Ծծաքարի ծով է կոչւում:

Ալստեղ կովեր էլ են բերում ուխտ անելու, որ շատ կաթ տալ: Միալն բերելիս հորթը կապում են կովի մէջքին, և իրենք առնելով ջուր, քսում նրա պտուկներին:

Կան քարեր ևս, որոնք պաշտուում են, որպէս մի որոշ հիւանդութեան բժշկութիւն տուող: Ալսպիսիներից էլ լիշենք միքանիսը:

Որպէս հազ հիւանդութեան բժշկող սուրբ քարեր.

Ա. Սարիբեկի ուխտատեղուց փոքր ինչ բարձր գտնուուղ ժայռը, որի միջով մի անցք է բացւում: Հազողները նախապէս մոմեր վառելով ալդ ժայռի առաջ, Յ կամ 7 անգամ անցնում են ալդ անցքով, լուսալով որ հազը կը կտրի:

Բ. Ալամանց գոմերում գտնուող «ըխտըլահազ» (խեղդող հազ) ուխտատեղին: Սա մի ծառի մօտ երկու ահազին քարեր են, որ միմեանց վրայ ընկնելով՝ մի փոքրիկ անցք են թողել: Խեղդող հազ ունեցողները նոյն կերպ բժշկում են:

Գ. Բողըխանի լերան վերալ, վանքից մօտ կէս վերստ հեռաւորութեամբ անտառի մէջ գտնուող մի սաժէն մեծութեան մեկուսի ընկած քարը, որի մէջ մի փոքրիկ անցք կալ: Ալստեղ նոյն կերպ բժշկում են փոքրիկ երեխաներին:

Դ. Սարուշէնի «ըխտըլահազը», որ նոյնպէս մի ծակ քար է և նոյն կերպ բժշկում է հազողներին:

Հացի գիւղում կալ Քոլէն (թփերի) խաչ, որ մի կաղնենու տակ երկու սրածե քարեր են. թէ ծառը և թէ քարերը պաշտուում են և համարւում ծծի վէրքերը դարմանող:

Շուշում, թուրքերի թաղում գտնուում է «Քամու-խաչ» անուն քարերի կոյտը, որ պաշտուում է որպէս «քամի»— ուեվմատիզմ հիւանդութեան բժշկութիւն տուող:

Նոյն հիւանդութիւնը բժշկող մի ժայռ քար էլ Դռնա-

վարզ գիւղում կալ, որ նոյնպէս «Քամու խաչ» է կոչւում և սլաշտում է:

Կան նաև քարեր ու ժայռեր, որոնց միջով անցքեր են բացուած. ամուլ կանալք երեք անգամ անցնում են ալդ անցքերով, որպէս զի որդի ունենան: Ասում են, թէ անցքը մեծանում և թոլլ է տալիս կնոջը անցկենալու, եթէ որդի է տալու, և նեղանում ու արգելում անցկենալու, եթէ որդի չի չի տալու: Ալսպիսի քարերից նշանաւոր են Պտկեսիքերքում և Սարիրէկում գտնուածները:

Աւգուս գիւղում գտնւում է «Աւգալ-օճախ» ուխտատեղին, որ հասարակ քարերի մի կոյտ է: Ալստեղ ուխտ են գալիս շրերը կանալք և կամ նրանք, որոնց որդիները տարին չլրացած մեռնում են, որպէս զի առաջինները որդի ունենան, իսկ երկրորդների որդիները երկարակեաց լինին:

Դռնավարդ և Քառասնի գիւղերի միջև կալ երկու քար, որոնք միմեանց վրալ ընկած լինելով, տակովը մի անցք են թողել: Այս անցքի տակ ևս մի փոքրիկ քար կալ, ուր գըտընում է մի խորշ: Եթէ տասերկու տարեկան ժամանակ ալդ խորշը ջուր ածեն և խմեն, 17 տարեկան հասակում սաստիկ զօրեղ կարող են լինել, որովհետեւ ալդ քարերը նըրան ոյժ կը տան:

Ալամենց գոմեր կամ Մատաթ քենդ գիւղի մօտ մի մեծ քար կալ, որի մասին ասում են, թէ Մարիամ Աստղածածինը դրա վրալ նստած է եղել, երբ հրեշտակը աւետիս է տուել նրան, թէ որդի պիտի ունենալի Այժմ ամէն մի անցորդ մի քար է վերցնում և դնում դրա վրալ, 'ի նշան իւր լարգանաց: Շատերն էլ պտուղներ են դնում և կամ մոմեր վառում:

Հին Քետթուկի մօտ Գիզատ ուխտատեղում կալ մի ծակ ժայռ քար. երաշտ ժամանակ կանալք գնում մոմեր են վառում ժայռի լանջին և ծակից ջուր վալը ածում: Ասում են, թէ այդ սուրբը ալնքան զօրաւոր է, որ անմիջապէս անձրեւ է անուան:

Մի ալսպիսի քար էլ ներքին Թաղավարդ գիւղում կալ —

միայն սա ծակ չէ: Երաշտ ժամանակ բերում ջուր են ա-
ծում վերան, կաթնաճաշ եփում, բաժանում, որ անձրև գալ:
Մի անգամ մի տղալ ծաղը ել է ալդ քարը և վեր կացել
կանգնել վերան, բայց անմիջապէս ոտները կուչ են եկել:

Մի քար էլ Դռնավարզում կալ, որ նոյն կերպ անձ-
րև է տալիս: Միայն այս քարը նրանով էլ է նշանաւոր, որ
երբ երկար ժամանակ անձրև է գալիս, բերում այս քարի
տակ կրտկ են վառում և անմիջապէս անձրևը կտրւում է:

Հացի գիւղից դէպի արևելք մօտ երկու վերստ հեռա-
ւորութեամբ կալ ժայռից պոկ եկած և առանձին ընկած
մի ահագին ժայռ քար, որ մէջտեղից ճեղքուած է: Այս քա-
րը պաշտում են թէ հայերը և թէ թուրքերը: Վերջիններս
ասում են, թէ Ալին է թրոպ խփել և ճեղքել: Այս քարի
մօտ մի աղբիւր կալ, որ կոչում է «Ալի-բուլաղ» (Ալու-աղ-
բիւրը):

Խաչմաչ, Հարաւ և այլ գիւղերում կան քարեր, որոնք
պաշտում են միմիայն կայծակի հարուած ստանալու պատ-
ճառով:

Քարեր էլ կան, որոնք թէև չեն պաշտում, բայց ո-
րոնց մասին պատմւում են զանազան աւանդութիւններ:

Այսպիսիններից նշանաւոր են.

Ո Ւ Ղ Տ Ա Ք Ա Ր Ե Ր

Մ. Քիրս լերան վերայ կան ուղտանման և մարդակերպ
քարեր. սրանցից փոքր ինչ հեռու մի ուրիշ քար, որ շատ
նման է աւելը թելող մի հարսի: Պատմում են, թէ մի ժա-
մանակ ալդ տեղով մի հարս են տարել: Պատահմամբ սրա
զգեստի ծալը պատռուել է և նա առանձնացել է կտրելու:
Այս միջոցին մի աղքատ պառաւ կին մօտեցել է հարսին և
ողորմութիւն խնդրել, իսկ սա բարկացել է վերան, որ այս-
պիսի նեղ ժամանակ եկել ողորմութիւն է ուզում: Պառաւն
էլ իւր կողմից բարկացել և անհծել է բոլորին, որ քար կըտ-

ըին: Եւ ալդ օրուանից հարսն էլ, մակարներն էլ, ուղարքն էլ քար կտրած մնացած են ալնտեղ:

Ց Ի Ց Ք Ա Ր

Աշան գիւղից մի փոքր ինչ վերև գտնուում է «Ցից քարը»: Սա մի ժայռ է, որ փոքր ինչ նմանութիւն է տալիս երեխան գրկած մի կնոջ: Ասում են, թէ մի ժամանակ մի հարս, երեխան գրկած գնալիս է եղել, երբ աւազակները լարձակուել են վերան: Սա չկամենալով նրանց ձեռքն ընկնել, խնդրել է Քիրսից և քար դառել:

Հ Ո Վ Ո Ւ Ւ Ք Ա Ր Ե Ր

Ա.

Խազազի լերան վերալ կան երկու մարդու, չորս ոչխարի և մի շան քարի արձաններ: Աւանդութիւնն ասում է, թէ մի ժամանակ գրանք կենդանի էին. Աստուած ուղարկել է գըրանց մօտ իւր հրեշտակին աղքատի շորերով, որպէս զի փորձէ գըրանց ողորմածութիւնը: Հովիւները ոչ միայն բան չեն տուել խեղճ աղքատին, այլ և քարկոծել են նրան: Ալդ ժամանակ վերջինս անիծել է նրանց և քար դարձրել:

Բ.

Գրիգոր անունով մի ճգնաւոր աւազակներից փախչելով թաք է կենում լետոյ սրա անուամբ կոչուած Լուսաւորչի քիրծի մէջ: Մի հովիւ յալտնում է աւազակներին նրա տեղը և սա նախ քան նահատակուիլը անիծում է հովուին, որ իւր կնոջ և ոչխարների հետ քար է կտրում: Այժմ ցոյց են տալիս հովուին, նրա կնոջը և ոչխարներին նմանութիւն բերող քարերը: